որոնց վրա Էջմիածինը հարկաւոր չէ համարում ուշադրութիւն դարձնել, եթէ Ս. Աթոռը չաշխատի այսուհետև ուղեցոյց բռնել իրան հասարակական կարծիքը, եթէ նա չաշխատի գործել և շարժվել ժողովրդի ցանկութեան համեմատ, եթէ նա չը շտապի դուրս գցել իր միջից այն զզուելի պարազիտներին, որոնք ոչնչացնում են Էջմիածնի անունը ամբողջ հայութեան առաջ: Այս գուշակութիւն չէ, այլ իրականութիւնից դուրս բերած մի ուղիղ եզրակացութիւն: Թող լաւ հասկանայ այս Էջմիածինը: Դործել ժողովրդի ցանկութեան հետ համաձայն,— այս պէտք է լինի այսուհետև նրա դեվիզը:

Մոսկվա Ս. Դաղեանց

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

—

Այս րոպէիս առաջիս դրած են Մոսկվայի երկու մանագիտական բարձր ուսումնարանները՝ այն է Պետրօվսկի երկրագործական ակադեմիայի և կայսերական տեխնիկական (արուեստագիտական) ուսումնարանի անցեալ ուսումեական տարվայ հաշիւները. ես մտադիր չեմ ձանձրացնելու ընթերցողին մանրամասն տեղեկութիւններով, հարկաւոր եմ համարում հաղորդել հայ ուսանողների թիւը այս ուսումնարաններում:—Երկրագործական ակադեմիայի 242 ուսանողներից 8-ը, իսկ տեխնիկական ուսումնարանի 442 ուսանողներից 17-ը հայեր են, կը նշանակէ որ մի միլիոն ժողովուրդը (Ռուսաստանի հայերի թիւը ո՞ւրքան է) աւելի մեծ բաժին ունի, քան 70 միլիոն ժողովուրդը: Ցարէցտարի մեր աչքի առաջ շատանում է հայ ուսանողների թիւը այս ուսումնարաններում. սա ուրախալի երևոյթ է մեզ համար, որովհետև միայն այսպիսի մասնագէտները կարող են կանոնաւոր արդիւնաւորող ուղղութիւն տալ մեր անտեսական կեանքին, նրանք միայն կարող են մեծացնել մեր երկրի բնական արդիւնաբերող ուժերը և մշակել—մեր պիտոյքներին բաւականութիւն տալու համար: Ես համոզված եմ որ այսպիսի մասնագէտները աւելի մեծ օգուտ պիտի բերեն մեր երկրին, քան այն բազմաթիւ իրաւաբանները և բժիշկները, որոնց երակներում, կարծես սառել է արիւնը պաշտօնական ձևակերպութեամբ: Ի հարկէ, վերոյիշեալ մասնագէտներն էլ կարող են հաստատհարել ժողովրդին, սակայն ներկայ ուսանողութեան մէջ թագաւորող ուղղութիւնը հազիւ թէ նպաստում է հարստահարող գործիչների կազմվելուն: Ներկայ ուսանողութեան վրա յարձակվում են ամեն կողմից, մինչև անգամ նրա պաշտպանները աշխատում են զանազան պատճառներով արդարացնել նրա պակասութիւնները, մինչդեռ այս պակասութիւնները մասնաւորի սեփականութիւն են, կամ շատ անգամ շատ չնչին են: Ասում են, հին ուսանողութիւնը մեծ եռանդով պարապած էր զանազան փիլիսոփայական հարցերով—ինչպիսի են Աստուծոյ, սիրոյ, պօէզիային վերաբերեալ հարցեր, իսկ նոր ուսանողութիւնը մեռած է, նա այսպիսի հարցերով անընդունակ է պարապել: Այս նոր ուսանողութիւնը չէ պարապում այս հարցերով, որովհետև նրանք արդէն վճռված են, և իւրաքանչիւր կրթված, զարգացած մարդ ունի որոշ համոզմունք, որոշ հայեացք այս հարցերի առթիւ: Նոր ուսանողութիւնը պարապած է աւելի իրական հարցերով, այս անկասելի է նրանց համար միայն, որոնք դուրս են գլխաւոր հոսանքից. նոր ուսանողութիւնը բացի իր մասնագիտական առարկաներից պարապված է հասարակական դիտութիւններով. հասարակական կեանքը իր բազմակողմանի ձիւղերով նրա ուսումնասիրութեան առարկան է, նրա ուշք ու միտքը զբաւած է ժողովրդով, նրա սիրտը վառված է սիրով դէպի ժողովուրդը....Զը նայելով շրջապատող ծանր հանգամանքներին, նոր ուսանողութիւնը մեծ հաստատամտութեամբ պատրաստում է իրան ապագայ հասարակական արդիւնաւոր գործունէութեան համար. իմ խօսքերս գուցէ այնքան չեն համոզում ընթերցողին, որովհետև փաստերից զուրկ են, բայց շատ պատճառներով ես չեմ կարող առաջ բերել լրագրի միջոցով զանազան փաստեր: Ես բոլորովին մտադիր չէի այստեղ խօսելու այս առարկայի մասին, բայց բանը այնպէս եղաւ, որ չէի կարող չը խօսել. ի հարկէ, չը պէտք է կարծել, որ նոր ուսանողութիւնը ոչինչ պակասութիւն չունի, այո՛, նա ունի և մեծ պակասութիւններ, որոնք սակայն չեն պատկանում ամբողջութեան և չեն կազմում ներկայ ուսանողութեան բոլոր կեանքը. նրանք ամեն մի լուրջ և կարդին շրջաններում հալածվում են. անգութ հանգամանքներ, որ միջոց էք տալիս արտայայտելու այն, ինչ որ ատելի և գարշելի է, մի՞ջոց էք տալիս գործելու այն, ինչ որ մարդուն նուաստացնում է և խայտառակութեամբ է պատկում նրա ճակատը. իսկ ինչ ազնիւ է, բարի է, խեղդում էք անյայտութեան մէջ, ինչ վառված է անտհման սիրով դէպի մերձաւորը, մեռցնում էք անողորմաբար: Բայց թողնենք այս հարցը, նրա մասին գուցէ միջոց ունենամ աւելի մանրամասն խօսելու. դառնում եմ յօդուածիս գլխաւոր նպատակին, թէպէտ ես առաջուց գիտեմ որ նա բաւական ձանձրացրել է մեր հասարակութեանը. խօսքս մեր ուսումնարանների վերա է: Մեր կեանքը թէ բարոյական, թէ մտաւորական և թէ տնտեսական կողմից ունի շատ մեծ պակասութիւններ. արդէն մեք համոզված ենք որ ուսումնարանը կարող է վերև յիշած երկու տեսակ պակասութիւնները մասամբ ոչնչացնել. ինչ որ վերաբերում է տնտեսական պակասութիւններին, նրանք՝ կարծում ենք թէ ուսումնարանի միջնորդութեամբ նոյնպէս լրացվում են, սակայն գրագիտական կրթութիւն տուող մեր ուսումնարանը չէ կարող ժողովրդի տնտեսական բարօրութեան աղբիւր լինել, որովհետև նա ստեղծում է միայն «կարդալ ու գրել» իմացողներ: Դեռ անցեալ դարի սկզբներում հասկացան որ ուսումնարանը պէտք է աշակերտին տայ և արհեստագիտական, տեխնիկական կրթութիւն, նա պէտք է պատրաստէ քաղաքացիներ, որոնք ստանալով գիտութիւնների պաշար ուսումնարանում, սկսեն արդիւնագործել իրանց տընտեսական պիտոյքները բաւականացնող ապրանքներ: Ուսումնարանի այսպիսի կոչումը արդէմիայի 242 ուսանողներից 8-ը, իսկ տեխնիկական ուսումնարանի 442 ուսանողներից 17-ը հայեր են, կը նշանակէ որ մի միլիոն ժողովուրդը (Ռուսաստանի հայերի թիւը ո՞րքան է) աւելի մեծ բաժին ունի, քան 70 միլիոն ժողովուրդը: Ցարէցտարի մեր աչքի առաջ շատանում է հայ ուսանողների թիւը այս ուսումնարաններում. սա ուրախալի երևոյթ է մեզ համար, որովհետև միայն այսպիսի մասնագէտները կարող են կանոնաւոր արդիւնաւորող ուղղութիւն տալ մեր անտեսական կեանքին, նրանք միայն կարող են մեծացնել մեր երկրի բնական արդիւնաբերող ուժերը և մշակել—մեր պիտոյքներին բաւականութիւն տալու համար: Ես համոզված եմ որ այսպիսի մասնագէտները աւելի մեծ օգուտ պիտի բերեն մեր երկրին, քան այն բազմաթիւ իրաւաբանները և բժիշկները, որոնց երակներում, կարծես սառել է արիւնը պաշտօնական ձևակերպութեամբ: Ի հարկէ, վերոյիշեալ մասնագէտներն էլ կարող են հաստատհարել ժողովրդին, սակայն ներկայ ուսանողութեան մէջ թագաւորող ուղղութիւնը հազիւ թէ նպաստում է հարստահարող գործիչների կազմվելուն: Ներկայ ուսանողութեան վրա յարձակվում են ամեն կողմից, մինչև անգամ նրա պաշտպանները աշխատում են զանազան պատճառներով արդարացնել նրա պակասութիւնները, մինչդեռ այս պակասութիւնները մասնաւորի սեփականութիւն են, կամ շատ անգամ շատ չնչին են: Ասում են, հին ուսանողութիւնը մեծ եռանդով պարապած էր զանազան փիլիսոփայական հարցերով—ինչպիսի են Աստուծոյ, սիրոյ, պօէզիային վերաբերեալ հարցեր, իսկ նոր ուսանողութիւնը մեռած է, նա այսպիսի հարցերով անընդունակ է պարապել: Այս նոր ուսանողութիւնը չէ պարապում այս հարցերով, որովհետև նրանք արդէն վճռված են, և իւրաքանչիւր կրթված, զարգացած մարդ ունի որոշ համոզմունք, որոշ հայեացք այս հարցերի առթիւ: Նոր ուսանողութիւնը պարապած է աւելի իրական հարցերով, այս անկասելի է նրանց համար միայն, որոնք դուրս են գլխաւոր հոսանքից. նոր ուսանողութիւնը բացի իր մասնագիտական առարկաներից պարապված է հասարակական դիտութիւններով. հասարակական կեանքը իր բազմակողմանի ձիւղերով նրա ուսումնասիրութեան առարկան է, նրա ուշք ու միտքը զբաւած է ժողովրդով, նրա սիրտը վառված է սիրով դէպի ժողովուրդը....Զը նայելով շրջապատող ծանր հանգամանքներին, նոր ուսանողութիւնը մեծ հաստատամտութեամբ պատրաստում է իրան ապագայ հասարակական արդիւնաւոր գործունէութեան համար. իմ խօսքերս գուցէ այնքան չեն համոզում ընթերցողին, որովհետև փաստերից զուրկ են, բայց շատ պատճառներով ես չեմ կարող առաջ բերել լրագրի միջոցով զանազան փաստեր: Ես բոլորովին մտադիր չէի այստեղ խօսելու այս առարկայի մասին, բայց բանը այնպէս եղաւ, որ չէի կարող չը խօսել. ի հարկէ, չը պէտք է կարծել, որ նոր ուսանողութիւնը ոչինչ պակասութիւն չունի, այո՛, նա ունի և մեծ պակասութիւններ, որոնք սակայն չեն պատկանում ամբողջութեան և չեն կազմում ներկայ ուսանողութեան բոլոր կեանքը. նրանք ամեն մի լուրջ և կարդին շրջաններում հալածվում են. անգութ հանգամանքներ, որ միջոց էք տալիս արտայայտելու այն, ինչ որ ատելի և գարշելի է, մի՞ջոց էք տալիս գործելու այն, ինչ որ մարդուն նուաստացնում է և խայտառակութեամբ է պատկում նրա ճակատը. իսկ ինչ ազնիւ է, բարի է, խեղդում էք անյայտութեան մէջ, ինչ վառված է անտհման սիրով դէպի մերձաւորը, մեռցնում էք անողորմաբար: Բայց թողնենք այս հարցը, նրա մասին գուցէ միջոց ունենամ աւելի մանրամասն խօսելու. դառնում եմ յօդուածիս գլխաւոր նպատակին, թէպէտ ես առաջուց գիտեմ որ նա բաւական ձանձրացրել է մեր հասարակութեանը. խօսքս մեր ուսումնարանների վերա է: Մեր կեանքը թէ բարոյական, թէ մտաւորական և թէ տնտեսական կողմից ունի շատ մեծ պակասութիւններ. արդէն մեք համոզված ենք որ ուսումնարանը կարող է վերև յիշած երկու տեսակ պակասութիւնները մասամբ ոչնչացնել. ինչ որ վերաբերում է տնտեսական պակասութիւններին, նրանք՝ կարծում ենք թէ ուսումնարանի միջնորդութեամբ նոյնպէս լրացվում են, սակայն գրագիտական կրթութիւն տուող մեր ուսումնարանը չէ կարող ժողովրդի տնտեսական բարօրութեան աղբիւր լինել, որովհետև նա ստեղծում է միայն «կարդալ ու գրել» իմացողներ: Դեռ անցեալ դարի սկզբներում հասկացան որ ուսումնարանը պէտք է աշակերտին տայ և արհեստագիտական, տեխնիկական կրթութիւն, նա պէտք է պատրաստէ քաղաքացիներ, որոնք ստանալով գիտութիւնների պաշար ուսումնարանում, սկսեն արդիւնագործել իրանց տընտեսական պիտոյքները բաւականացնող ապրանքներ: Ուսումնարանի այսպիսի կոչումը ար-

---

Կարեոր կը համարեմ հոս մի օրինակ յառաջ բերել.

30 տարի առաջ Օսման փաշա Վանայ Պէտէրխանպէյը ձերբակալելէն զկնի՝ զրաղեցաւ Տէրսիմը նուաճելու և յաջողեցաւ հնազանդեցնել Տէրսիմի կէսը—Ղուզիյան, Խոզաթ, Մամկերտ և Զարսանճագ—և աքսորել պէյերը, բայց այս ձեռնարկը տակաւին ի գլուխ եկած չէր, որ պէյերը վերադարձան, կարծես չը թողնելու հայերուն զէթ մի ժամ հանգիստ և անդորրութիւն վայելել. բազմաթիւ ձեռնարկներու մէջ միշտ անօգուտ նուաճումներէ զկնի այս ապստամբութիւնը կրկին սկսած է. վերջին առիններս, հինգ տարի յառաջ, Նէֆիկ փաշա, 3 տարի յառաջ Խուրշիդ փաշա, անցեալ տարի Ալի Շէֆիք պէյ, և այս տարի ալ Տէվրիշ փաշա պարապ տեղը Տէրսիմով զբաղեցան. *)

Նմանապէս պարապ տեղը զբաղեցան և տակաւին այսօր ալ կը զբաղին Մօտքանով և Սասունով, կայ 51 տարի. Պօհտանով և Հէքեարիով, կայ 46 տարի, 4 տարին մի անգամ 10000-էն աւելի զօրք զրկելով այդ գաւառները.

Դարձեալ Կենճի, Ճապաղչուրի, Խուլֆի, Խեանքի, Խարզանի և Թիզանի քրդերը մերթ նուաճուած են և մերթ թուլացած.

Վերջին առիններս (69—70) Արնաուտ Խամիլ փաշան 5—6000 տուն թափառական քիւրդեր վանած է դէպի Տիգրիսի եզերքները, զանոնք հոն տեղաւորելու նպատակաւ Մշոյ լեռներէն *) (Պատրքանի, Փոքրանի, Ալկատոնի և Փէնճինարի). Հոն այս քրդերը երկրացի հայերուն պատուաւոր ուր նոյն տարրը կատարելապէս անհետացած է, սակայն այս գաւառներուն մէջ, ոչ գաղթականութիւն, ոչ ալ տարագրութիւն տեղի ունեցած չեն, և կենսապահ տարերքները երբէք աննպաստ չեն բնակչաց համար.

*) Այս եղանակաւ ի գործ դրուած իսլահաթը բնաւ շահաւէտ չէ արքունական գանձին. այսպէս այս տարի անօգուտ տեղը գրեթէ 30,000,000 դրուշ ծախս եղաւ այն նկատմամբ, բայց ընդհակառակն չափազանց արդիւնաւոր է փաշաներուն համար. կըսուի թէ և Լոնտրայի Թայմզ լրագիրն ալ կը յիշէ թէ Տէվրիշ փաշա 1500 ջորի առած է քիւրդերէն, առանց հաշուելու ասկէ զատ առած ստակը, ընծաները և խիլաները.

*) Բազմաթիւ քիւրդ ցեղեր հայկական ծագումն ունին, լեռնական ազատ և անկախ կենաց վարժուած այս անձինքը տակաւ առ տակաւ մոռացած են իրենց կրօնքը և իրենց ազգութիւնը. շատ անգամ սոքա մկրտել կը տան իրենց զաւակունքը, ուխտի կերթան վանքերը ըստ հայկական սովորութեանց և հայ անուններ կը կրեն, մանաւանդ կանայք. 1865-ին զուրտ Խամիլ Հաքքի փաշան իրեն նուաճած քրդերը Թլիֆտել տուաւ փոքրիկ երեխայներէն սկսեալ մինչև եօթանասուն տարեկան քրդերը.

*) 300 տուն հայեր, գիւղացի և քաղաքացի, կողոպտված են. Այս հայերը ապստամբաց և զինուորաց զոհ եղած են.

*) Հէքեարիի ապստամբաց գլխաւորն է Շէյխ Իսպատուլան. Արդարութեան արդի պաշտօնեայ Ճէվդէթ փաշան յանձնեց զասիկա և Շէյխ Ճէլալէտտին Նորին վսեմութեան յանձնաժողովոյ անդամ Իւսուֆ փաշային. այս տեղեկութիւնը ստոյգ աղբիւրէ կը քաղենք.

*) Այս քրդական պատուարը, զոր կառավարութիւնը կը ջանայ հաստատել այնչափ խնամօք, նոյն իսկ Ցաւրոսի և Կորդուսց մէջ, միշտ ինքնին կործանելու վրա եղած է, բայց մի օր պիտի կործանի Օսմ. կառավարութեան վրա ըստ անկեղծ յայտարարութեան մի քանի միւիրներու և հաւատարիմ պաշտօնատէրներու, որք սոյն վերջին պատերազմիս առնն կարողացան ճանչնալ քրդաց վայրենի բնութիւնը և զինուորական անյարմարութիւնը.

*) Այսպէս նոյն իսկ կառավարութեան դռները իսլամ պաշտօնատարն անգամ կանպատուէ քրիստոնէական կրօնքը և մանաւանդ սուրբ խաչը.

*) Հայոց վրա սուտ զրպարտութիւններ ընելով, զանոնք կը տանի չէրիի առջև, որ զանոնք կը բանդարկէ և անոնց ինչքերը յարքունիս կը զրաւէ. խեղճ հայք կրնամոխութեամբ միայն կարող են զերծանիլ այս պատիժներէն. օրինակ, վերջին առիններս Բզիի Աւերքնիկ գիւղէն Պօղոս անուն մի անձ կամաստանուի մի իսլամ կնոջ հետ յարաբերութիւններ ունենալու վրայոք: Այսոր տունը կը կողոպտեն և անդադար սպառնալիքներ կընեն. այս ամեն տանջանքներէն նեղուած, իսլամութիւնը կընդունի և կամուսնանայ իսլամ կնոջ հետ....երեսի վրա թողով իր առաջուան հայ կինը: Նմանապէս 74 թուին Բաբերդցի Ղասըմ անուն թուրքը Բաբերդու վարչական գլուխն Պապօ անուն անձը կամաստանեց հետեւեալ կերպով. «Քու հայրդ, կըսէ թուրքը, երիտասարդ առենը կուրացուցած է. Շուրեղցիի մօլլայի որդին, արդ՝ ի փոխարէն, կամ 170 Օսմ. լիրա պիտի հատուցանես ինձ, կամ հարգ իսլամութիւնը պիտի ընդունի». Ցաճիկն ու զաղին միմանց հետ համաձայնած լլնելով, այս խնդրոյս դաբը կերկարաձգի, և հազիւ հազ կը կարողանան արդարութիւնը հատուցանել տալ Ղատիին ուզած պարգևները տալով.

*) Անգթաբար ծեծ կուտան, քիթ, բերան, ականջ կը կտրեն, աչք և ատամն կը հանեն, անդամներ կը վիրաւորեն կամ կը կտրեն. օրինակ, 77-ին, Խնուսի խէրթ գիւղին մէջ կը քաշեն Մանասէ անուն քահանայն, մի բանի վրա կը ցցեն, չարաչար տանջանքներ տալով կիսամեռ կը թողուն. հետեւեալ տարին խեղճ քահանայն կը մեռնի. ապա կը կապեն իր հարսն ու կինը և.... Այս ոճիրները գործող չարագործը՝ Շէյխ Մուրատ, յիրաւի իրեններով մէկտեղ, երեք զանազան վայիներ կը աքսորեն, սակայն միշտ կը վերադառնայ իր աքսորէն....Եւ մանաւանդ Իպօ և Հալիմ անուն քրդերը Փուրնազ գիւղէն ցակոբ անուն անձին ծնողական անդամները կը կտրեն, և գիշերուն մինչև առաւօտ ոտքերէն տանիքէն կը կախեն, այսօր սոյն անձը Ներքինի է.

*) Երկրագործական և տան վերաբերեալ գործիքներ, կարասիք, մանաւանդ դանակներ և սուրեր, տարձանակներ, հրացաններ, նմանապէս կապերտներ, գաւազան, վերջապէս ինչ ըլլայ, ըլլայ, հայուն ստացուածքը իսլամէն կախու

դէն ընդունված է և ամենալայն կերպով իրագործվում է քաղաքակրթված երկրներում անհամար արուեստագիտական և գիւղատնտեսական ուսումնարանների հիմնարկութեամբ: Մեզ համար այս խնդիրը աւելի մեծ նշանակութիւն ունի, որովհետև մեր հասարակական կեանքը դեռ գտնվում է մեռած դրութեան մէջ. ուսումնարանը պէտք է նրան վերածնէ, վերակենդանացնէ, ուստի հարկաւոր է մեր ուսումնարանին տալ արուեստագիտական տեխնիկական ուղղութիւն որպէս զի նա ստեղծէ լաւ արհեստաւորներ: Ի հարկէ ինձ կը պատասխանեն թէ մեր ուսումնարանների նիւթական միջոցները չեն ներում այսպիսի ձեռնարկութիւններ անելու, այո, այս միջոցները շատ չնչին են գանազան մեքենաներով գործարաններ և արհեստանոցներ բացելու, բայց նրանք շատ բաւական են այնպիսի արհեստանոցներ ունենալու ուսումնարանին կից, ինչպէս են մեր պիտոյքները լցնող կօշկակարի, դերձակի, հիւսնի և այլ արհեստանոցները: Վանքի մէջ այս արհեստները սովորելու համար հարկաւոր է 5—6—7 և էլ աւելի տարիներ. աշակերտը այս ժամանակի ընթացքում իր վարպետի տորմին է, նրա աշխատանքը ամենարդար կերպով հարստահարում է վարպետը, մի և նոյն ժամանակ պատրաստում է նրանից իր նման հարստահարող արհեստաւոր: Տեխնիկական կրթութեան տահմանները շատ լայն են, բայց բաւական է փոքրից սկսել գործը, և ես հաւատացած եմ, որ նա շատ զեղեցիկ կերպով կարող է ընթանալ, եթէ մեր ուսումնարաններում ամփոփվեն մեր նոր ուժերը: Ցանկալի էր լսել մեր մանկավարժների կարծիքը այս առթիւ, թէպէտ, ճշմարիտ ասած, Նրանցից քիչ բան կարելի է սպասել, որովհետև նրանք նեղ մանկավարժական հարցերից չեն կարողանում բարձրանալ, նրանց համար տնտեսական հարցերը հետաքրքրելի չեն, իսկ եթէ մեր մանկավարժները լեռն, գոնէ լրագրութիւնը չը պէտք է լռի. նա արդէն խօսում է կանանց պրոֆէսիօնական կրթութեան մասին, ուրեմն և պարտաւոր է խօսելու արական արհեստագիտական կրթութեան մասին էլ:

Մոսկվա Ն. Աբէլեանց

ՆԱՄԱԿ Վ.ԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

4 փետրվարի

Հազիւ թէ մեր հայերի մէջ գտնվի բարոյականապէս յետ ընկած այնպիսի մի հասարակութիւն, ինչպէս է Վաղարշապատի հասարակութիւնը: Վաղարշապատցին երբէք չէ հետաքրքրվում հասարակական գործով. Վաղարշապատցին երբէք չէ մտածում ընդհանուրին վերաբերած գործի համար, իր անձնականից դուրս նա ոչինչ չէ ընդունում: Աւաթիս թող վկայ լինեն այս գիւղի երկսեռ դպրոցների աննախանձելի դրութիւնը և ուրիշ բաներ, որոց թւում և այն որ «Արարատեան» ընկերութեան համար ամեն տեղ նուիրատուութիւններ եղան, իսկ Վաղարշապատցին գուցէ այդ ընկերութեան մասին տեղեկութիւն չունի: Օրինակներ շատ կան, բայց Նորանց այժմ առաջ բերելը ինձ հեռու կը տանի նամակիս ներկայ նպատակից, ուրեմն Նորանց մասին մի ուրիշ ժամանակ: Եթէ պատահում է, որ մէկը մի որ և է հարց է առաջարկում հասարակութեան օգտին, Վաղարշապատցին, ըստ երևութին տալիս է իր հաւանութիւնը, մինչև անգամ այդպիսի մի հարց առաջարկողին հասարակութեան բարերար է անուանում, սակայն եկաւ յարմար բոպէն, նա խկոյն վազում է վանքը, իր «հայր սուրբի կամ սրբազանի» մօտ *) մէկին երկու աւելացնելով, առաջարկած հարցին բոլորովին թիւր մեկնութիւն տալով, այդ հարց առաջարկողին, որին հասարակութեան բարերար էր կոչել, խռովարար և վանքի շահերին դաւաճան ներկայացնելով, որոգայթէ լարում նրա դէմ. Այս գիւղի հասարակութեան առաջադէմ դաս կազմողները, մի երկու վաչխառու հարուստների հետ միասին, տեղացի չինովնիկներն են, որոնք բոլորն էլ սինոդի ծառայողներ են: Սոցանից ոչ մէկը, բացի ատենադպրից, որ, կարծեմ, այստեղացի չէ, չը գիտէ պետական լեզուն, հայերէնից էլ, պէտք է խոստովանած, բորիկ են, այնպէս որ նրանք բոլորն էլ սինոդից դուրս ոչինչ պարապմունք չեն կարող ունենալ: Այս սինոդը կատարեալ անկելանոց է այդ պարոնների համար. ուրիշ կերպ էլ լինել չէ կարող, քանի որ պետական գանձարանից սինոդին յատկացրած ռոճիկը շատ աննշան է և սինոդը վանքական եկամտից ոչինչ չէ նշանակում. այն ինչ այդ միջոցով աւելի գրագէտ մարդիկ կարելի էր հրաւիրել օտար քաղաքներից: Բայց ես դարձեալ հեռանում եմ իմ բուն նպատակից: Այդ չինովնիկ աղաները, իրանց շատ հեռու են պահում հասարակ ժողովրդի շրջանից, նոքա ոլիմպիական բարձրութիւնից են նայում հասարակ ժողովրդի վրա, նոքա չեն ցանկանում հասարակական գործերում առաջնորդել ժողովուրդը, նոքա լայող չեն անում մինչև անգամ գործ ունենալ տգէտ ամբոխի հետ, ինչպէս նորանք ասում են, գուցէ այդպէս պահանջում են նրանց չաները: *) Սակայն վերջին օրերում մի խլրտում, մի շարժում նկատելի եղաւ Վաղարշապատի հասարակութեան մէջ. վերջապէս ներկայ հանգամանքները, կարծես, ներգործեցին Վաղարշապատի մեռած հասարակութեան վրա և յանկարծ վաղարշապատցիք ժողով ժողովի վրա են կազմում, ժողովրդի աղքատ դասը ցրտամահից և սովամահից փրկելու մի հնար գտնելու համար: Գուցէ տեղի ունեցած մի երկու դժբաղդ պատահմունք ազդեց վաղարշապատցի աղաների խղճին *). Թէ այսպէս և թէ այնպէս ժողովներ եղան և լինում են: Ես սկզբում կարծեցի, թէ այդ շարժումը, այդ ժողովները լինում են տիրացու չինովնիկների ինցիատիւով, սակայն հետամուտ լինելով ժողովներին, հարցու փորձ անելով սորան նորան, տեղեկացայ հետևեալը: Մեր վեհափառ Հայրը, որ սկզբում կարելի չէր համարում այդպիսի մի բերրի և առատ երկրում հացի չափազանց թանգութեան և մինչև անգամ սովի յայտնվելը, հաստատապէս տեղեկանալով որ իր ժողովուրդը հացի կարօտութիւն ունի, որ Վաղարշապատում շատ ընտանիքի սովամահ է սպառնում, հայրաբար գթաց նրանց վրա և հրամայել բարեհաճեց մօտ 65 ընտանիք, որոնց թւում և գաղթական Ալաշկերտցիներ կերակրել բոլորովին ձրի միաբանութեան սեղանից մինչև նոր հունձը և ամսէ ամիս դարձեալ մինչև նոր հունձը վանքական չտնտարանից տալ Վաղարշապատի հասարակական հացթուխ Եղիազարեանին ցորեն փոխարինաբար յայտնի գրաւականով և այն պայմանաւ, որ թխած հացը չքաւորներին ծախի ֆունտը 5 կոպէկով, իսկ միւսներին պօլիցիայի գնահատութեան համաձայն. և իր այս վերջին կարգադրութիւնը արդարութեամբ կատարելու համար հացթուխի կողմից Նորին Օծութիւնը հրամայեց հասարակական ժողով կազմել և հոգաբարձուներ ընտրել հացթուխի վրա հսկելու համար: Այժմ հասկանալի է թէ վաղարշապատցիք ում են պարտական այս ժողովների կազմելով. Այս ժողովներում, որոնց երկուսին նախագահում էր պ. Գաւառապետը, հասարակութիւնը վճռեց ֆունտը 5 կոպէկով հաց տալ միայն 100 ընտանիքի, որոնց անուանական ցուցակը յանձնեց հացթուխ Եղիազարեանին, վճռելով ամեն մէկին օրական տալու հացի քանակութիւնը, և 25—30 տան հաց տալ ժողովրդից ընտրած հոգաբարձուների տոմսակներով ֆունտը 3 կոպէկով, այդ փողերը ստանալով հոգաբարձուներից ամսէ ամիս և այդ գումարը լրացնելու համար Նուիրատուութիւն ժողովել: Այս վերջին նպատակի համար պ. գաւառապետից վերադարձած գումարը յանձնուեց հոգաբարձուներին: Հոգաբարձուները բոլորն էլ բարեխիղճ մարդիկ են, եթէ միայն չուտով չը ձանձրանան նուիրատուութիւն ժողովելուց, որ բաւականին մեծ տանջանք է այնպիսի հասարակութեան մէջ, ինչպէս Վաղարշապատինն է:

* * *

*) Ճշմարտութիւնը պահանջում է խոստովանել, որ պ. Փ. Նալբանդեանցը, որ սինոդում գործավարի պաշտօն ունի, բացառութիւն է կազմում, այդ էլ խալիպեան ուսումնարանի շնորհն է:

*) Լուր է տարածվել, որ անցեալ յունվար ամսի ընթացքում երեք նորածիններ ցրտից սառել են, մէկը ծնվելուց անմիջապէս կէս ժամ յետոյ, իսկ միւս երկուսը եկեղեցու ճանապարհին մկրտել տանելու ժամանակ: Այս լուրը հաստատվում է և ասում են որ տեղացի քահանաքէ չեն համաձայնում տներում կատարել երեխայոց մկրտութեան խորհուրդը:

* Ամեն վաղարշապատցի ունի իր հայր սուրբը կամ սրբազանը:

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 փետրվարի

Կարդալով վանեցի սովատանջ հայերի ցաւալի դրութեան նկարագիրը, որը ամեն մի հայի աչքերը արեան արտասուքով է լցնում և որը չէ կարող արձագանք չը գտնել ամեն մի հայի սրտում, թէկ նա լինէր մինչև անգամ անդգայ մի մարդ, ուստի աչքի առաջ ունենալով և զգալով այն սարսափելի դրութիւնը և տանջանքը որը կրում են մեր վանի եղբայրները և քոյրերը, մենք մեր կողմից կամենում ենք մէկ խոհեմ օրինակ լինել մեր հայ արհեստաւորներին, —(սորանով մենք չենք ուզում պարծենալ), նոցա բարի նախանձը գրգռելով դէպի օգտաւէտ գործը:

Մենք ջերմ սրտով նուիրում ենք մեր զուտ արդիւնքի 5%ը յօգուտ վանի սովատանջների, իւրաքանչիւր ամիս՝ սկսած ամսի 1-ից մինչև առաջիկայ հունձը: Մենք մեզ խրախուսում ենք այն յոյսով, որ մեր յարգելի տիկնայք և օրիորդները անտես չեն առնի մեզ իւրանց հանդերձեղէնների պատուէրները տալ, որով միջոց կը տային մեզ աւելի նշանաւոր գումար արտադրել յօգուտ սովատանջների դրամարկղի: Պատուէրները ընդունում ենք բաւականի արժան գնով, մեր կար ու ձեւից պատուիրողները նոյնպէս միտ գոհ են մընում: Պատուիրել ցանկացողները թող բարեհաճեն դիմել Գանովսկի փողոց, դերձակ Գրիգոր և դերձակուհի Շուշանիկ (Սանդուխտ) Անեանի խանութը, պոլկովնիկ Շախնազարովի նոր չինութեան մէջ:

Գրիգոր Անեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Փորձ» ամսագրի խմբագրութիւնը խնդրում է մեզ յայտնել որ բացի պ. Սանասարեանցից ստացած 1500 ր. գումարից, դարձեալ ստացվել են խմբագրութեան մէջ յօգուտ վանի սովատանջների հետևեալ նուէրները: Իշխան Ամատունու «Արուեստաւորների կլուբում» կազմված պարահանդէսից 404 ր., պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանցից 200 ր., «Գործա կատարների կլուբից» 100 ր., և Թիֆլիսում բնակվող Հին-Նախիջևանցի արհեստաւորներից ու մշակներից 52 ր., ընդամենը 756 ր., իսկ Սանասարեանցի 1500 ր. գումարի հետ միասին 2250 բուբլ: Այս գումարը փոխադրված է հեռագրով Վան ի անօրէնութիւն սովատանջների համար կազմված մասնաժողովի:

—

ՕԴԷՍՍԱՅԻՑ մեզ գրում են փետրվարի 2-ից. «Ամբրոսիոս Ռուբինեան վարդապետը երէկ հասաւ Օդէսսա քաղաքը և հրաւիրում է հայ հասարակութիւնը արդէն ամենքին յայտնի նուիրատուութիւնների մասին.»

—

Ամեն տարի «Մշակը» փոխանակվում էր հետևեալ տեղական հրատարակութիւնների հետ. «Кавказъ», «Тифл. Вѣстн.», «Обзоръ», «Тифл. Объявленія», «Մեղու Հայաստանի», «Դրօշակ», «Զիա» լրագիրների և «Փորձ» ու «Մանկավարժական թերթ» ամսագիրների հետ: Բացի սորանից մենք փոխադարձապէս ստանում էինք «Донская Пчела» և «Бакинск. Извѣст.» թերթերը: Նոյնպէս «Մշակը» փոխադարձապէս ուղարկվում էր միւս «Մասիս» և «Մանգումէի Լիքեար» Կ. Պոլսի լրագիրներին և Էջմիածնի «Արարատ» ամսագրին: Իսկ այս տարի դիմեցին մեզ, խնդրելով փոխանակել «Մշակը» իրանց թերթերի հետ հետևեալ ռուս խմբագրութիւնները՝ «Русскій Курьеръ», «Виленскій Вѣстникъ», «Русская Газета», «Свѣтъ и Тѣни» և «Мирской Толкъ»: Դա ուրախալի երևոյթ է, որ մայրաքաղաքի ռուս խմբագրութիւնները սկսում են այժմ իրանք խնդրել փոխանակել իրանց հրատարակութիւնները հայոց լրագրի հետ: Բացի վերն յիշված այդ բոլոր հրատարակութիւններից, որոնք փոխադարձապէս են ստացվում, «Մշակի» խմբագրութիւնը ստանում է և քանի մի այլ պարբերական հրատարակութիւններ, ինչպէս «Голосъ», «Temps» լրագիրներ և «Unsere Zeit» ամսագիրը:

—

Ստացանք ՓՕԹԻՈՒՄ բնակվող պ. Կարապետ Պ ո պ օ վ ի ց 1000 բուբլ յօգուտ վանի սովատանջների: Այդ գումարը, որ նուիրել է պ. Պոպով հասցրած է «Մշակի» խմբագրութեանը Թիֆլիսաբնակ պ. Սողոմոն Բայսոզլովի ձեռքով:

—

«Русскій Курьеръ» լրագրում կարդում ենք որ Երեւելի Երգիչներ տ. Արտօ և պ. Պադիլլա, որոնք անցեալ տարի Թիֆլիսումն էին, այս բոպէիս կօնցէրտներ են տալիս Վիլնա քաղաքում:

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են, որ այնտեղի քահանաները մի առանձին հաճութեամբ ներկայ են գըտնվում հարուստների թաղման հանդէսին, որովհետև գիտեն որ բաւական լաւ կը վարձատրվեն, իսկ աղքատների թաղմանը ոչ միայն տհաճութեամբ են գնում, այլ և շատ անգամ զանց են առնում իրանց պարտականութիւնները. օրինակ, օրերումս մի աղքատ մարդ վախճանվեցաւ և թաղվեցաւ առանց քահանաների, մի քանի մշակների ձեռքով միայն:

—

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՅ, որ Վանի սովատանջների համար ստորագրութիւն է բացված և փող է հաւաքվում: Բացի դորանից, դիտաւորութիւն կայ Ամբրոսիոս վարդապետի հաւաքած և այստեղ պահված 500 բուբլին ուղարկել Վանի սովեալներին: Սկսված նոր ստորագրութիւնը վերջին գումարի հետ 1000 բուբլու կը հասնի:

—

Մեզ գրում են ՄԵՂՐԻ գիւղից, որ այդ գիւղի մէջ մի քանի ժամանակ առաջ նոր դպրոց հիմնելու մասին յուզված խնդիրը, այժմ շատ անմխիթար ընթացք է ստացել: Ցանուտէրի ընդդիմարութեան և մի քանի պարոնների ինտրիգաների պատճառով ժողովուրդը բոլորովին անտարբեր դարձաւ դէպի դպրոցի հարցը: Գործի այդ տեսակ ընթացքը շատ նպաստաւոր է գիւղի երեք հին ուսուցիչներին, որոնք դարձեալ հաւաքելով 20—30 մանուկներին մութ և խոնաւ սենեակներում փող են վաստակում, սովորեցնելով ողորմելիներին սաղմոս և քերականութիւն հին եղանակով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻԱ

Կորտէսի փետրվարի 6-ին կայացած նիստի միջոցին, գաղթականութիւնների միջնորը, պատասխանելով պ. Ակաստային, յայտնեց, թէ կառավարութիւնը վճռեց, որ այսուհետև Կուբան և Պորտօ-Ռիկօն կը վայելեն մի և նոյն իրաւունքները, ինչպէս որ թերակղզու միւս նահանգները: Պ. Կանովասդէլ Կաստիլիօ յայտնեց, որ նա թոյլատրութիւն է տուել գներալ Մարտինէց Կամպօսին, որ նա բոլոր հարկաւոր եղած միջոցները գործ դնի վերջ դնել Կուբայի պատերազմին: Պորտօ-Ռիկօի պատգամաւոր Ակաստօ ասաց, որ նա և նրա պաշտօնակիցները հաստատ վճռել են աշխատել որ և իցէ կերպով ձեռք գցել իրանց ներկայացրած նահանգների համար մի և նոյն օրէնքները, որոնք գործադրվում են սպանիական թերակղզու նահանգներում:

Կառավարութիւնը շարունակաբար կը ներկայացնի Կորտէսին Կուբայի բիւդժէտը և ֆինանսական պէտք եղած բոլոր փոփոխութիւնները:

Ծովային մինիստրութեան հրատարակած պաշտօնական լուրերից երևում է, որ Ֆիլիպպեան կղզիների մօտ մի կատաղի ուրագան է բարձրացել, որին զոհ են գնացել գանազան մեծութեան 25 նաւեր. կործանվող նաւերի թւում եղել են նոյնպէս և չորս օտարազգական ֆրեգատներ:

Այդ նաւերի վրա գտնվող մարդկերանցից մինչև 46 հոգի խեղդվածներ են հաշուում, բացի այս ահագին քանակութեան նաւեր էլ վնասվել են:

Օտէրօի գործը, բժշկների հակասութիւնների շնորհիւ, դեռ անորոշ դրութեան մէջ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ